

ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ
և ՍԵՌԱԿԱՆ
ՃԱՆԱՊԱՐՅՈՎ
ՓՈԽԱՆՑՎՈՂ
ՎԱՐԱԿՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ



RUSSIA

Ու՞ր դիմել աջակցության համար

Գրքույկը հրատարակված է ,ՍՊԻԴ ինֆոսվյազե տարածաշրջանային հասարակական կազմակերպության կողմից Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներին վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում աջակցության տրամադրման ծրագրի շրջանակներում:



Ծրագրի լոգոտոպը

© Տրամադրվում է անվճար, 2013 թ.

При перепечатке ссылка на «СПИД инфосвязь» обязательна.

ՄԻԱՎ-ը և ՁԻԱՅ-ը	5
Ի՞նչ են ՄԻԱՎ-ը և ՁԻԱՅ-ը	5
Ի՞նչպես է մարդը վարակվում.....	6
Վարակվել հնարավոր է	6
ՄԻԱՎ-ը չի փոխանցվում.....	7
Ինչպե՞ս խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց	8
Կարո՞ղ է արդյոք մարդն զգալ, որ վարակվել է ՄԻԱՎ-ով	9
Ի՞նչ է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը.....	9
Ի՞նչ նշանակություն ունի ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը	11
Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ	12
Ի՞նչով են վտանգավոր ՍՃՓՎ-ները	12
Մարդն ինչպե՞ս կարող է իմանալ իր մոտ ՍՃՓՎ-ների առկայության մասին	13
Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ ՍՃՓՎ-ների մասին	14
Հիմնական տեղեկություններ առավել տարածված ՍՃՓՎ-ների մասին	17
Գոնորեա	17
Սիֆիլիս	19

Խլամիդիոզ	22
Տրիխոմոնիազ	23
Սեռական օրգանների հերպես	24
Սեռական օրգանների կանդիդոզ	25
Սրածայր կոնդիլոմաներ	26
Քու	28
Ցայլքային ոջլոտություն	29
Վիրուսային հեպատիտներ	30
Ինչպե՞ս խուսափել ՍՃՓՎ-ներից	32
Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ պահպանակի մասին	32
Ի՞նչպես օգտագործել պահպանակը	34
Որտե՞ղ կարելի է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ	36

ՄԻԱՎ-ը և ՁԻԱՅ-ը

Ի՞նչ են ՄԻԱՎ-ը և ՁԻԱՅ-ը

ՄԻԱՎ-ը (մարդու իմունային անբավարարության վիրուս) վիրուս է, որն ախտահարում է իմունային համակարգի բջիջները, ինչի հետևանքով օրգանիզմը կորցնում է վարակներից պաշտպանվելու իր ունակությունը: ՄԻԱՎ վարակը երկարատև ընթացքով հիվանդություն է: Ժամանակի ընթացքում իմունային համակարգը թուլանում է այն աստիճան, որ մարդը դառնում է անպաշտպան ոչ միայն սովորական վարակների հանդեպ, ինչպիսին են գրիպը կամ դիզենտերիան, այլև այնպիսի բակտերիաների և վիրուսների հանդեպ, որոնք նախկինում չէին կարող հիվանդություններ առաջացնել, քանի որ իմունային համակարգը թույլ չէր տալիս դրանց բազմանալ:

ՁԻԱՅ-ը (ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ) ՄԻԱՎ վարակի վերջնային փուլն է, որը զարգանում է ՄԻԱՎ-ով վարակվելուց տարիներ անց

(միջինում 8-ից 10 տարի): Քանի դեռ հիվանդությունը չի անցել ՁԻԱՅ-ի փուլ, մարդը կարող է իրեն լավ զգալ, ունենալ առողջ արտաքին և նույնիսկ չկասկածել, որ վարակված է:

Ի՞նչպես է մարդը վարակվում

ՄԻԱՎ-ը կարող է փոխացվել մարդու օրգանիզմի միայն որոշակի հեղուկների միջոցով:

- ➔ Դրանք են՝
- ➔ արյունը,
- ➔ սերմնահեղուկը,
- ➔ հեշտոցային արտազատուկները,
- ➔ մայրական կաթը:

Վիրուսն առկա է նաև օրգանիզմի այլ հեղուկներում (մեզ, թուք, քրտինք), սակայն դրանք վտանգավոր չեն վարակման տեսանկյունից, քանի որ դրանցում ՄԻԱՎ-ի խտությունը շատ ցածր է:

Վարակվել հնարավոր է

- ➔ առանց պահպանակի սեռական հարաբերությունների ժամանակ,

- ➔ չախտազերծված ներարկման պարագաներ օգտագործելիս,
- ➔ չախտազերծված գործիքներով դաջվածքներ կատարելիս,
- ➔ արյան փոխներարկման ժամանակ,
- ➔ ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխան կարող է վարակվել հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ և կրծքով կերակրվելիս:

ՄԻԱՎ-ը չի փոխանցվում

- ➔ առօրյա կենցաղային շփումների ժամանակ, գրկախառնվելիս, ձեռքով բարևելիս,
- ➔ ընդհանուր սանհանգույցից օգտվելիս, լողավազան, բաղնիք այցելելիս,
- ➔ ընդհանուր սպասքից օգտվելիս,
- ➔ համբույրի միջոցով,
- ➔ հազի, փռշտոցի միջոցով,
- ➔ մոծակի կամ այլ միջատների կծելու միջոցով:

Ինչպե՞ս խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց

ՄԻԱՎ-ով վարակման հնարավորությունը կախված է մարդու վարքից: Դրսևորելով անվտանգ վարքագիծ կարելի է խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց: Դրա համար անհրաժեշտ է՝

- ➔ ունենալ միայն մեկ, ՄԻԱՎ-ով չվարակված, հավատարիմ գուլգընկեր և փոխադարձաբար լինել նրան հավատարիմ,
- ➔ խուսափել ռիսկային սեռական կապերից, երբ հայտնի չէ ՄԻԱՎ-ի նկատմամբ գուլգընկերոջ կարգավիճակը, իսկ դրա անհնարինություն դեպքում օգտագործել պահպանակ,
- ➔ գերծ մնալ թմրամիջոցներ գործածելուց,
- ➔ օգտագործել միայն ախտազերծված ներարկման պարագաներ,
- ➔ դաջվածքներ կատարել միայն մասնագիտացված սրահներում, հետևելով, որ օգտագործվեն ախտազերծված գործիքներ:

Մարդու արտաքին տեսքից հնարավոր է կռահել նրա վարակված լինել-չլինելու մասին: Մեծամասամբ դու չգիտես զուգընկերդ վարակված է ՄԻԱՎ-ով, թե՛ոչ: Հնարավոր է ինքն էլ չիմանա այդ մասին: Զ ո անվտանգության համար պատասխանատվությունն ինքդ ստանձնիր և ինքդ հոգա քո առողջության մասին:

Կարո՞ղ է արդյոք մարդն զգալ, որ վարակվել է ՄԻԱՎ-ով

Ոչ: ՄԻԱՎ-ի օրգանիզմ ներթափանցելու պահին մարդը որևէ արտասովոր զգացողություն չի ունենում: ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակի մասին հանարավոր է իմանալ միայն անցնելով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

Ի՞նչ է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը

Օրգանիզմում ՄԻԱՎ-ի հայտնաբերման համար լայնորեն կիրառվող հետազոտությամբ հայտնաբերվում է ոչ թե անմիջականորեն

վիրուսը, այլ դրա նկատմամբ առաջացած հակամարմինները: Լաբորատոր հետազոտությամբ հայտնաբերվելու համար բավարար քանակությամբ հակամարմիններ վարակվածների մեծ մասի արյան մեջ ի հայտ են գալիս վարակվելուց միջինը 3 ամիս անց: Այդ պատճառով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն պետք է անցնել հնարավոր վարակման պահից առնվազն 3 ամիս հետո:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքը կարող է լինել **դրական** կամ **բացասական**:

Դրական արդյունքը նշանակում է, որ հետազոտվողի արյան մեջ հայտնաբերվել են ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմիններ, ինչը վկայում է նրա ՄԻԱՎ-ով վարակված լինելու մասին:

Բացասական արդյունքը նշանակում է, որ հետազոտվողի արյան մեջ ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմիններ չեն հայտնաբերվել: Դա կարող է լինել այն դեպքերում, երբ մարդը վարակված չէ, կամ վարակված է, սակայն հակամարմինների քանակությունը դեռևս բավարար չէ դրանց հայտնաբերման համար:

Ի՞նչ նշանակություն ունի ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը հնարավորություն է տալիս փաստորոշելու ՄԻԱՎ վարակը վաղ շրջանում, երբ հիվանդության փոխանցման ռիսկը նվազ է:

Հիվանդության վաղ փուլում չափազանց կարևոր է անհրաժեշտ բուժումը ժամանակին սկսելու, հետագա ապրելակերպի վերաբերյալ ճիշտ որոշումներ կայացնելու, ուրիշներին վարակը չփոխանցելու համար:

Հիվանդության վաղ փուլում հատկապես կարևոր է հղիների կամ հղիություն ծրագրող կանանց համար, քանի որ ժամանակին իրականացված կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ ՄԻԱՎ վարակ ունեցող կինը կարող է 98-99% դեպքերում ունենալ առողջ երեխա:

Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ

Սեռական ճանապարհով փոխանցվող վարակները (ՍՃՓՎ) հիվանդություններ են, որոնցով մարդը վարակվում է սեռական հարաբերությունների ժամանակ:

Ներկայումս հայտնի են ավելի քան 20 հիվանդություններ, որոնք փոխանցվում են սեռական ճանապարհով:

Որոշ ՍՃՓՎ-ներ, սեռական ճանապարհից բացի, կարող են փոխանցվել նաև արյան միջոցով, կենցաղային ճանապարհով, վարակված մորից երեխային: Երեխան կարող է վարակվել հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ և կրծքով կերակրվելիս:

Ի՞նչով են վտանգավոր ՍՃՓՎ-ները

Ժամանակին չբուժված ՍՃՓՎ-ները կարող են լուրջ բարդությունների պատճառ դառնալ՝ փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվանդություններ, արտարգանդային հղիություն, վիժումներ, արգանդի վզիկի

քաղցկեղ, կանանց և տղամարդկանց անպտղություն, շագանակագեղձի բորբոքում (պրոստատիտ), շագանակագեղձի քաղցկեղ, երեկտիլ դիսֆունցիա (իմպոտենցիա), ներքին օրգանների և նյարդային համակարգի ախտահարումներ և այլն:

Մարդն ինչպե՞ս կարող է իմանալ իր մոտ ՍՃՓՎ-ների առկայության մասին

ՍՃՓՎ-ների մեծամասնությունն ունեն համանման ախտանշաններ՝ տհաճ զգացողություններ սեռական օրգանների, հետանցքի շրջանում՝ քոր, կարմրություն, այրոցի զգացում, արտասովոր արտադրություն, ցավ միզելիս, վերքեր, խոցեր սեռական օրգանների շրջանում, բերանի խոռոչում, ջերմության բարձրացում:

ՍՃՓՎ-ների վաղ ախտանշանները հաճախ դժվար է լինում տարբերակել, և հիվանդները հիմնականում անտեսում են դրանք՝ մինչև ավելի լուրջ ախտահարումների ի հայտ գալը:

ՍՃՓՎ-ների զգալի մասը կարող է ընթանալ նաև առանց ակնառու ախտանշանների: Սակայն այդ դեպքում էլ վարակված անձինք վարակի աղբյուր են զուգընկերների համար:

ՍՃՓՎ-ների առկայությունը հնարավոր է հաստատել միայն հատուկ հետազոտությունների օգնությամբ (քսուլքի մանրադիտակային հետազոտություն, մանրէաբանական հետազոտություն, արյան հետազոտություններ):

ՍՃՓՎ-ներով վարակված լինելու կասկածի դեպքում անհրաժեշտ է հնարավորինս շուտ դիմել մասնագետի, անցնել անհրաժեշտ հետազոտություններ և բուժվել:

Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ ՍՃՓՎ-ների մասին

- ➔ Առանց պահպանակի մեկ սեռական հարաբերության ժամանակ հնարավոր է վարակվել միաժամանակ մի քանի ՍՃՓՎ-ով:
- ➔ Ընդհատված սեռական հարաբերությունն ու բեղմնականիսիչ հաբերը չեն

պաշտպանում ՍՃՓՎ-ներով, ՄԻԱՎ-ով վարակումից:

- ➔ ՍՃՓՎ-ներն ինքնաբուժման չեն ենթարկվում: Երբեմն հիվանդության ախտանշանները կարող են անհետանալ առանց բուժման, սակայն դա չի նշանակում, թե հիվանդն ապաքինվել է: Հարուցիչն ամեն դեպքում մնում է օրգանիզմում: Ցանկացած պահի հիվանդությունը կարող է գլուխ բարձրացնել, ունենալ ավելի ծանր ընթացք և առաջացնել բարդություններ:
- ➔ Գործնականում գրեթե բոլոր ՍՃՓՎ-ները բուժելի են, եթե ախտորոշվում են ժամանակին, և բուժումն իրականացնում է մասնագետը:
- ➔ Որքան վաղ սկսվի բուժումը, այնքան ավելի հեշտ և արագ կարելի է բուժվել, և այնքան ավելի ցածր կլինի տարբեր բարդությունների առաջացման հավանականությունը:
- ➔ Ախտանշանների առկայության դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել մասնագետի և երբեք չզբաղվել

ինքնաբուժմամբ, քանի որ նման դեպքերում հիվանդությունը կարող է ստանալ քրոնիկ ընթացք: Առանց բժշկի նշանակման դեղերի ընդունումը կարող է հանգեցնել ծանր կողմնակի ազդեցությունների զարգացման:

- ➔ Չուզընկերներից որևէ մեկի մոտ ՍՃՓՎ ախտորոշվելիս, մյուսը ևս պետք է հետազոտվի անգամ ախտանշանների բացակայության դեպքում:
- ➔ ՍՃՓՎ-ների արդյունավետ բուժման կարևոր նախապայմաններից մեկը զուգընկերների միաժամանակյա բուժումն է, որի ընթացքում պետք է խուսափել սեռական հարաբերություններից:
- ➔ Անհրաժեշտ է, որ երբևէ որևէ ՍՃՓՎ-ով հիվանդացած անձինք հետազոտվեն նաև ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, քանի որ այն ևս փոխանցվում է սեռական ճանապարհով:

Հիմնական տեղեկություններ առավել տարածված ՍՃՓՎ-ների մասին

⇒ **Գոնորեա**

Գոնորեայի (տրիպեր) հարուցիչը գոնոկոկն է, որը կարող է ախտահարել ոչ միայն միզասեռական համակարգը, այլև ուղիղ աղիքը, ըմպանը:

Վարակումը տեղի է ունենում սեռական ճանապարհով, հիվանդի անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, սպունգ, սպիտակեղեն) օգտագործելիս, մորից երեխային՝ ծննդաբերության ժամանակ:

Հիվանդության ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս վարակվելուց 3-8 օր հետո: Կարող են դիտվել արտաքին սեռական օրգանների այտուց և կարմրություն, հեշտոցային արտազատուկների արտասովոր փոփոխություններ (դրանք կարող են դառնալ ջրիկ, դեղին կամ կանաչավուն), առնանդամից մածուցիկ թարախային արտադրություն,

արյան և թարախի առկայություն
սերմնահեղուկում, ցավ և այրոցի զգացում
միզելիս, ցավ սեռական հարաբերության
ժամանակ, ցավ շեքի շրջանում, որը
ճառագայթում է դեպի ազդրերն ու հետանցքի
շրջանը, թարախային արտադրություն
ուղիղ աղիքից, հետանցքի շրջանի քոր,
ջերմության բարձրացում և ավշային
հանգույցների մեծացում, ըմպանի բորբոքում,
դաշտանային ցիկլի խանգարումներ,
արյունահոսություններ:

Երբեմն հիվանդության ախտանշանները
կարող են անհետանալ առանց բուժման:
Հիվանդությունը կարող է ընթանալ նաև
առանց ախտանշանների, հատկապես
կանանց մոտ:

Վարակված մորից հիվանդությունը
երեխային կարող է փոխանցվել
ծննդաբերության ժամանակ: Այս դեպքում
կարող են ախտահարվել երեխայի աչքերը
(բլետորեա):

Հիվանդության նկատմամբ իմունիտետ չի
զարգանում, հնարավոր է կրկնավարակում:

⇒ Սիֆիլիս

Չարուցիչը դժգույն սպիրոխետոն է, որը գտնվում է սիֆիլիսով հիվանդի սերմնահեղուկի, հեշտոցային արտազատուկների և կարծր շանկրի պարունակության մեջ:

Վարակումը տեղի է ունենում սեռական ճանապարհով՝ բոլոր ներթափանցող սեռական հարաբերությունների ժամանակ, արյան միջոցով, օրինակ՝ դոնորական արյան փոխներարկման ժամանակ, բժշկական միջամտություններ կատարելիս վնասվածքներ ստանալու հետևանքով, համբույրի միջոցով, երբ հիվանդության դրսևորումներ կան բերանի խոռոչում կամ շրթունքների վրա, կենցաղային շփումների ժամանակ՝ կենցաղային առարկաների (ափսե, բաժակ, սրբիչ), սպիտակեղենի կամ այլ պարագաների համատեղ օգտագործման դեպքում, մորից երեխային՝ հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ կամ կրծքով կերակրելիս:

Սիֆիլիսն ունի ալիքաձև ընթացք. հիվանդության սրացումների շրջաններին հաջորդում են անախտանշան շրջանները:

Հիվանդության կլինիկական ընթացքում տարբերում են երեք փուլ:

Առաջին փուլում, որը սկսվում է վարակվելուց 3-4 շաբաթ հետո, առաջանում են կարմրաշագանակագույն, անցավ, որպես կանոն չարյունահոսող, կարծր, հարթ հիմքով և եզրերով, կլորավուն, 3մմ-ից մինչև 2-5 սմ մեծությամբ խոցեր՝ կարծր շանկր: Կախված սեռական հարաբերության տեսակից, այդ խոցերը կարող են տեղակայվել սեռական օրգանների շրջանում, ուղիղ աղիքում, բերանի խոռոչում, ըմպանում, մաշկի վրա: Խոցը կարող է պահպանվել 1-5 շաբաթ և, հաճախ, առանց բուժման անհետանում է, սակայն մարդը մնում է վարակակիր: Խոցի հայտնվելուց 8-14 օր հետո սկսում են մեծանալ մոտակա ավշային հանգույցները: Դրանք բորբոքվում են, դառնում են պինդ, սակայն որպես կանոն ցավոտ չեն: Այս փուլում երբեմն կարող են լինել ընդհանուր թուլություն, անքնություն, գլխացավ, ջերմության բարձրացում:

Երկրորդ փուլում (վարակումից 2-6 ամիս հետո) մարմնի տարբեր մասերի՝ ափերի, ներբանների, իրանի և լորձաթաղանթների վրա առաջանում է ցանավորում՝ վարդագույն

բծեր, որոնք 1-2 ամսվա ընթացքում կարող են ժամանակ առ ժամանակ անհետանալ և կրկին հայտնվել: Ցանի տարրերը վարակիչ են: Ի հայտ են գալիս փոփոխությունները քիչ օրգանների և հենաշարժական համակարգի կողմից, կարող են նկատվել ջերմության բարձրացում, գլխացավ, հնարավոր է օջախային մազաթափություն, մաշկի գույնի փոփոխություն, ձայնի տեմբրի իջեցում: Չբուժվելու դեպքում այս փուլը կարող է շարունակվել 3-5 տարի, որից հետո սկսվում է սիֆիլիսի երրորդ փուլը կամ ուշ սիֆիլիսը: Այն բնորոշվում է սրտի, լյարդի, հենաշարժական համակարգի, ողնուղեղի և գլխուղեղի ծանր ախտահարումներով, որոնք կարող են հանգեցնել մահվան:

Սիֆիլիսով վարակված հղիների շրջանում մեծ է վիժումների, մեռելածնության կամ վարակված երեխա (բնածին սիֆիլիս) ունենալու վտանգը:

Սիֆիլիսը լավ է ենթարկվում բուժման սկզբնական փուլերում և ավելի դժվար՝ ուշ փուլերում:

Հիվանդության նկատմամբ իմունիտետը կայուն չէ, հնարավոր է կրկնավարակում:

⇒ Խլամիդիոզ

Խլամիդիոզը ևս լայնորեն տարածված հիվանդությունն է: Հաճախ ընթանում է առանց արտահայտված ախտանշանների, բավականին դժվար է ախտորոշվում և բուժվում, հանգեցնում է բազմաթիվ բարդությունների: Հիվանդության հարուցիչները՝ խլամիդիաները, ախտահարում են սեռական օրգանները, հոդերը, աչքերը:

Վարակումը տեղի է ունենում սեռական ճանապարհով, վարակված մորից երեխային՝ ծննդաբերության ժամանակ:

Սեռական օրգաններից վարակը կարող է փոխանցվել աչքերի լորձաթաղանթին (տրախոմա):

Հիվանդության ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս վարակվելուց հետո 5-30 օրվա ընթացքում: Կարող են դիտվել լորձային (լորձաթարախային) արտադրություն հեշտոցից, ցավ որովայնի ստորին հատվածում, միզուկի բորբոքման դեպքում՝ ցավ և այրոց միզելիս:

⇒ Տրիխոմոնիազ

Հարուցիչը տրիխոմոնադն է, որը կարող է գոյատևել ոչ միայն մարդու օրգանիզմում, այլև դրանից դուրս, օրինակ՝ խոնավ սրբիչների և լողասենյակային այլ պարագաների, սպիտակեղենի վրա: Տրիխոմոնիազով առավել հաճախ վարակվում են կանայք:

Վարակումը տեղի է ունենում՝ սեռական ճանապարհով, կենցաղային շփումների ժամանակ՝ ընդհանուր սրբիչի, սպունգի, սպիտակեղենի միջոցով, մորից երեխային՝ ծննդաբերության ժամանակ: Կենցաղային ճանապարհով վարակումները հազվադեպ են:

Հիվանդության ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս վարակվելուց հետո 3-4 օրից մինչև 3 շաբաթվա ընթացքում: Կարող են դիտվել հեշտոցային արտազատուկների քանակի ավելացում, որոնք կորցնում են մաժուցիկությունը, դառնում են փրփրանման, դեղնականաչավուն, տհաճ հոտով, արտաքին սեռական օրգանների շրջանում կարմրություն, քոր, ցավ, այրոց միզելիս, ցավ սեռական հարաբերության ժամանակ, դաշտանային

ցիկլի խանգարումներ, արյան առկայություն
սերմնահեղուկում կամ մեզի մեջ:

Հիվանդությունը կարող է ընթանալ նաև
առանց ախտանշանների:

⇒ **Սեռական օրգանների հերպես**

Սեռական օրգանների հերպեսի հարուցիչը
սովորական հերպեսի վիրուսն է:

Հիվանդությունն առավել հաճախ
հանդիպում է կանանց շրջանում:

Վարակումը տեղի է ունենում սեռական
ճանապարհով, վարակված մորից երեխային՝
ծննդաբերության ժամանակ, երբեմն
հնարավոր է ինքնավարակում, երբ դեմքի վրա
առկա վերքերից վիրուսը ձեռքերի միջոցով
տարածվում է սեռական օրգանների վրա:

Հիվանդության ախտանշանները
սովորաբար ի հայտ են գալիս վարակվելուց
2-10 օր հետո: Դիտվում են այրոց, քոր
և ծակոցներ սեռական օրգանների կամ
հետանցքի շրջանում, ցավ կամ այրոց միզելիս,
ընդհանուր թուլություն, գլխացավ, մարմնի
ջերմաստիճանի բարձրացում, հնարավոր
են նաև ցավեր ոտքերի և շեքի շրջանում:

Մեկ-երկու օրվա ընթացքում ախտահարման շրջանում առաջանում են փոքրիկ կարմիր բծեր, որոնք ձևափոխվում են բշտիկների, վերջիններս էլ պատռվելով՝ առաջացնում են կարմիր գույնի ցավոտ խոցեր:

Զբուծվելու դեպքում հիվանդությունը կարող է պարբերաբար կրկնվել սրացումների ձևով (2-3 տարին մեկ, երբեմն՝ ամեն ամիս):

⇒ Սեռական օրգանների կանդիդոզ

Սեռական օրգանների՝ Կանդիդա ցեղի սնկերով պայմանավորված ախտահարում է: Այս սնկերը կան յուրաքանչյուր մարդու բերանի խոռոչում, ստամոքսում, միզասեռական համակարգում: Քանի դեռ դրանք գտնվում են որոշակի հավասարակշռության մեջ առողջ մարդու օրգանիզմում առկա այլ սնկերի կամ բակտերիաների հետ, որևէ խնդիր չեն հարուցում: Սակայն երբ այդ հավասարակշռությունը խախտվում է, դրանք սկսում են բազմանալ՝ առաջացնելով կանդիդոզ: Հիվանդության զարգացմանը նպաստում են իմունիտետի թուլացումը, այդ

թվում ՄԻԱՎ վարակը, քրոնիկ այլ վարակները, շաքարային դիաբետը, հակաբիոտիկներով ինքնաբուժումը, հորմոնալ բեղմնականիսիջների մշտական օգտագործումը, թմրամիջոցների գործածումը, հղիությունը:

Վարակումը տեղի է ունենում սեռական ճանապարհով: Հնարավոր է վարակի փոխանցումը մորից երեխային ծննդաբերության ժամանակ:

Հիվանդությունն արտահայտվում է հեշտոցային արտազատուկների քանակի ավելացմամբ, որոնք դառնում են լոռանման և ձեռք են բերում տհաճ հոտ, սեռական օրգանների շրջանում կարմրությամբ, քորով և այրոցով, որոնք ուժեղանում են ջրային պրոցեդուրաներից հետո, կարող են լինել սպիտակ փառ ամնանդամի գլխիկի վրա, ցավեր միզելիս և սեռական հարաբերության ժամանակ:

⇒ Սրածայր կոնդիլոմաներ

Սրածայր կոնդիլոմաները բաց վարդագույն կամ մաշկագույն գորտնուկանման գոյացություններ են, որոնք առաջանում են

մարդու պապիլումայի վիրուսով վարակվելու հետևանքով: Վարակումը տեղի է ունենում սեռական ճանապարհով: Վարակի փոխանցմանը նպաստում են սեռական օրգանների լորձաթաղանթի վնասվածքների կամ այլ վարակների առկայությունը:

Վարակման պահից մինչև կոնդիլոմաների առաջացումը կարող է անցնել 1- 3 ամիս: Կոնդիլոմաները կարող են տեղակայվել հեշտոցամուտքի կամ հետանցքի շրջանում, նաև հեշտոցում և արգանդի վզիկի վրա՝ առանձին կամ ծաղկակաղամբի նմանվող խմբերով: Հիմնականում ցավոտ չեն, բայց երբեմն քոր են առաջացնում:

Սովորաբար կոնդիլոմաները հայտնաբերվում են զննման ժամանակ:

Բուժումն իրականացվում է և՛ վիրաբուժական ճանապարհով՝ գորտնուկների հեռացում, և՛ համապատասխան դեղերի տեղային օգտագործման միջոցով: Բուժման արդյունքում վերացված կոնդիլոմաները կարող են կրկին հայտնվել: Կոնդիլոմաների ինքնուրույն հեռացումն անթույլատրելի է, քանի որ կարող է հանգեցնել դրանց հետագա աճին:

⇒ **Քոս**

Հիվանդությունն առաջանում է մաշկի մեջ քոսի տզի ներթափանցման հետևանքով: Վարակումը տեղի է ունենում մարմանական սերտ շփման, սովորաբար սեռական հարաբերության ժամանակ: Քոսի տիզը կարող է փոխանցվել նաև հագուստի և անկողնային պարագաների միջոցով: Կենցաղային ճանապարհով վարակումները հազվադեպ են:

Հիվանդությանը բնորոշ են խիստ արտահայտված քորը, որն ուժեղանում է հատկապես գիշերային ժամերին, և մաշկի վրա մանր վարդագույն ցանավորումը՝ փոքրիկ բշտիկների տեսքով: Քորելու հետևանքով դրանք ճանկռվում են՝ գոյացնելով կետային, արյունային կեղևներ: Քորվածքները կարող են բորբոքվել: Երկրորդային վարակ միանալու դեպքում կարող է զարգանալ մաշկի թարախային հիվանդություն՝ պիոդերմիտ:

Քոսի ժամանակ քորը և ցանավորումն ունեն բնորոշ տեղակայում: Սովորաբար ախտահարվում է մատների կողմնային մակերեսների, ձեռքերի և ոտքերի ծալիչ մակերեսների, որովայնի ստորին և

կրծքավանդակի կողմնային մակերեսների, ազդրերի ներսային մակերեսների մաշկը:

Երկրորդային վարակի միացման դեպքում, ինչպես նաև քոսի տզի նկատմամբ ալերգիկ ռեակցիա զարգանալիս հիվանդությունը կարող է ստանալ ծանր, ձգձգվող բնույթ:

⇒ Ցայլքային ոջլոտություն

Ոջլոտություն նշանակում է, որ մարդու մարմնի վրա մակաբուծում են ոջիլներ: Ոջիլներն արյունածուծ մակաբույծներ են: Մարդու մաշկի վրա մակաբուծում են 3 տեսակի ոջիլներ՝ գլխի, հագուստի և ցայլքի: Ցայլքի ոջիլը փոխանցվում է մարմանական սերտ շփման ժամանակ և անկողնային պարագաների միջոցով:

Հիվանդության ախտանշաններն ի հայտ են գալիս վարակվելուց 1-3 շաբաթ անց և արտահայտվում են ցայլքի, աճուկային շրջանի ուժեղ քորով՝ հատկապես գիշերները:

Ախտահարված հատվածների մազերի վրա նկատելի են դառնում պինդ կպած շագանակագույն կամ մոխրագույն կետային գոյացություններ՝ ոջիլի ձվերը:

➔ Վիրուսային հեպատիտներ

Հեպատիտ նշանակում է լյարդի բորբոքում: Վիրուսային հեպատիտների պատճառը տարբեր վիրուսներ են, որոնք բազմանում են լյարդի բջիջներում և քայքայում դրանք: Բջիջների ախտահարման հետևանքով խաթարվում է լյարդի աշխատանքը: Առավել տարածված են վիրուսային հեպատիտներ A, B, C, D-ն: Դրանցից հատկապես վտանգավոր են հեպատիտներ B-ն և C-ն, քանի որ վարակվածների մոտ հաճախ զարգանում են լյարդի ծանր քրոնիկ ախտահարումներ՝ քրոնիկ հեպատիտ, լյարդի ցիրոզ, լյարդի քաղցկեղ:

Հեպատիտներ B-ով և C-ով հնարավոր է վարակվել

- ➔ սեռական ճանապարհով՝ բոլոր տեսակի ներթափանցող սեռական հարաբերությունների ժամանակ,
- ➔ արյան միջոցով՝ թմրամիջոցների ներարկային գործածման ժամանակ ներարկման չախտազերծված պարագաներ՝ ներարկիչներ, ասեղներ, գդալներ, ֆիլտրեր

և այլն օգտագործելիս, դաշվածքներ կատարելիս կամ բժշկական այլ միջամտությունների ժամանակ չախտազերծված գործիքներ օգտագործելիս, դոնորական արյան փոխներարկման, օրգանների, հյուսվածքների փոխպատվաստման ժամանակ,

- ➔ մորից երեխային՝ հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ,
- ➔ հիվանդի անձնական հիգիենայի պարագաներ օգտագործելիս:

Ի՞նչպես խուսափել հեպատիտներ B-ով և C-ով վարակվելուց

Դրա համար հարկավոր է՝

- ➔ խուսափել թմրամիջոցների ներարկային գործածումից,
- ➔ օգտագործել ներարկման ախտազերծված պարագաներ՝ ցանկալի է միանվագ օգտագործման,
- ➔ խուսափել ուրիշի արյան հետ շփումից,
- ➔ չօգտագործել ուրիշի անձնական հիգիենայի պարագաներ (ատամի խոզանակ, ածելի, մատնահարդարման պարագաներ),

- ➔ սեռական հարաբերությունների ժամանակ մշտապես օգտագործել պահպանակ,
- ➔ դաջվածքներ կատարել միայն մասնագիտացված սրահներում՝ հետևելով որ օգտագործվեն միանվագ օգտագործման կամ ախտազերծված գործիքներ,
- ➔ պատվաստվել հեպատիտ B-ի դեմ:

Ինչպե՞ս խուսափել ՍՃՓՎ-ներից

ՍՃՓՎ-ներից խուսափելու ուղիներն են՝

- ➔ ժուժկալությունը,
- ➔ սեռական հարաբերությունները միայն մեկ չվարակված, հավատարիմ զուգընկերոջ հետ և փոխադարձ հավատարմությունը,
- ➔ պահպանակի մշտական և ճիշտ օգտագործումը:

Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ պահպանակի մասին

- ➔ Պահպանակն օգնում է կանխել ՍՃՓՎ-ները, ՄԻԱՎ վարակը և անցանկալի հղիությունը:

- ➔ Պահպանակի օգտագործումը չափազանց հեշտ է և միանգամայն բնական:
- ➔ Պահպանակն անվտանգ է, չի առաջացնում կողմնակի երևույթներ (եզակի դեպքերում կարող է առաջանալ ալերգիա լատեքսի նկատմամբ:
- ➔ Պահպանակը հասանելի է, այն կարելի է գնել ցանկացած դեղատնից:
- ➔ Պահպանակը միանգամայն հուսալի է ճիշտ և կանոնավոր օգտագործելու դեպքում:
- ➔ Պահպանակը հարկավոր է պահել չոր, զով տեղում, արևի լույսից հեռու:
- ➔ Պահպանակը կարող է պատռվել, եթե ժամկետանց է, եթե իբրև լուբրիկանտ (քսանյութ) օգտագործվում են ճարպային հիմքով կրեմներ կամ յուղեր, եթե օգտագործվում են երկու պահպանակ միաժամանակ:
- ➔ Պահպանակը յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս իր վրա վերցնել սեռական հարաբերությունների անվտանգության պատասխանատվությունը և ոչ մեկից կախված չլինել:

Ի՞նչպես օգտագործել պահպանակը

- ➔ Պահպանակը մի՛ գնիր և մի՛ օգտագործիր, եթե փաթեթը վնասված է, պիտանելիության ժամկետն անցել է կամ ընդհանրապես նշված չէ փաթեթի վրա:
- ➔ Պահպանակը բացելիս մի՛ օգտագործիր սուր գործիքներ (մկրատ, դանակ): Նախքան պահպանակը հագցնելը մատներով սեղմիր դրա վերևի պարկանման հատվածը՝ սերմնահեղուկի կուտակիչը, որպեսզի օդը դուրս մղվի, այլապես սերմնահեղուկի համար տարածություն չի լինի և պահպանակը կարող է պատռվել:
- ➔ Բացի՛ր պահպանակն առնանդամի ամբողջ երկարությամբ՝ մինչև հիմքը:
- ➔ Սերմնաժայթքումից անմիջապես հետո հանի՛ր պահպանակը, կապի՛ր, որպեսզի սերմնահեղուկը չթափվի և նետի՛ր աղբարկղը:
- ➔ Պահպանակները հուսալիորեն պաշտպանում են ՍՃՓՎ-ներից, ՄԻԱՎ-ից, եթե օգտագործվում են մշտապես,

սեռական հարաբերության ողջ ընթացքում՝ պահպանելով օգտագործման կանոնները: Սակայն պետք է իմանալ, որ որոշ ՍՃՓՎ-ներ, ինչպես քոսը, ցայլքի ոչիլը, հերպեսը կարող են փոխանցվել սեռական հարաբերության ժամանակ անկախ պահպանակի օգտագործումից:

Եթե դու առաջարկում ես զուգընկերոջդ օգտագործել պահպանակ, չի նշանակում, թե չես վստահում նրան: Ընդհակառակը՝ դա վկայում է այն մասին, որ դու մտահոգ ես քո և նրա առողջության պահպանմամբ և պատասխանատվության զգացում ունես:

Պահպանակ օգտագործելով դու հոգում ես ոչ միայն քո, այլ նաև զուգընկերոջդ առողջության մասին:

Որտե՞ր կարելի է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն կարելի է անցնել ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում (ք. Երևան, Ավան, Աճառյան 2): ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունն անվճար է, ուղեկցվում է նախա- և հետթեստային խորհրդատվությամբ, ցանկության դեպքում կարող է կատարվել անանուն: Հետազոտության արդյունքների գաղտնիությունը երաշխավորվում է:

ՄԻԱՎ վարակին առնչվող հարցերի պատասխաններ կարելի է ստանալ նաև ,Թեժ գիծ» ծառայության միջոցով՝ 61-08-20, ամեն օր, բացի հանգստյան օրերից, ժ. 09.00-18.00:

**Ու՞ր դիմել աջակցության
համար**

личество крови из вены, и результаты бывает готов уже через несколько дней.

Положительный результат говорит о возможном наличии ВИЧ-инфекции, нужно сделать до-полнительный подтверждающий тест.

Отрицательный результат свидетельствует о том, что антитела к ВИЧ не обнаружены. Это может озна-чать следующее: человек не заражён ВИЧ; человек заражён, но с момента попадания вируса в орга-низм прошло менее 3-х месяцев и антитела к ВИЧ ещё не вырабатаны.

Как обследоваться на ВИЧ?

Обследование на ВИЧ может пройти любой че-ловек. Для этого необходимо обратиться в центр СПИД или другое медицинское учреждение, про-водящее такие исследования.

Куда обратиться за помощью:

Анализ на ВИЧ выявляет не сам вирус, а анти-тела к нему, для выработки которых нужно время, около 3-х месяцев (иногда до 6-ти месяцев). Поэтому для получения достоверного результата обследования необходимо пройти через 3 месяца после «опасной» ситуации или сексуального контакта. Человек сдаёт на анализ небольшое ко-

Что такое тест на ВИЧ?

Нет. Например, мы можем сразу понять, что простудился, по наличию определённых симптомов. Но в момент проникновения в организм ВИЧ, человек не испытывает никаких необычных ощущений. Узнать о своем ВИЧ-статусе можно только пройдя тестирование.

Может ли человек почувствовать, что заразился ВИЧ?

- ➔ При каждом сексуальном контакте использовать качественную презерватив. Избегать употребления наркотиков.
- ➔ Использовать стерильный инструментарий для инъекций и татуировок.

Как предотвратить заражение?

Заразиться ты ВИЧ или нет, зависит от того, что ты делаешь. В большинстве случаев ты можешь не знать, есть ли ВИЧ у другого человека. Да и сам человек может об этом не догадываться.

**Ответственность за свою безопасность
возьми на себя!**

ВИЧ не передается при:

- ➔ Прикосновениях.
- ➔ Поцелуях.
- ➔ Через посуду и столовые приборы.
- ➔ Укусах комаров, других насекомых и животных.
- ➔ В бассейне, сауне, туалете.

Только по внешнему виду человека нельзя определить его ВИЧ-статус. Поэтому, если ты все же решился на небезопасное поведение, предупредительный разговор с партнером, снижающий риск заражения, то необходимо:

- ➔ Соблюдать правила защитного контакта, использовать презервативы.
- ➔ Избегать попадания в организм биологических жидкостей, особенно крови и спермы.

Как происходит заражение?

ВИЧ может передаваться только через определённые жидкости организма человека:

- ➔ кровь;
- ➔ сперму;
- ➔ вагинальный секрет (выделения);
- ➔ материнское молоко.

Вирус может находиться и в других жидкостях организма (моче, слюне, поте), но они не опасны для заражения, потому что концентрация ВИЧ в них очень низкая.

Итак, заразиться можно в следующих случаях:

- ➔ при сексуальном контакте без презерватива;
- ➔ при переливании инфицированной крови;
- ➔ при использовании нестерильного инструмента-тарара при инъекциях;
- ➔ при нанесении татуировок и пирсинге нестерильными инструментами;
- ➔ при использовании общих бритв и зубной щётки;
- ➔ инфицированная мать может передать ВИЧ своему ребёнку во время беременности, родов или кормления грудью.

Что такое ВИЧ и СПИД?

БЕРЕГИ СЕБЯ

← **ВИЧ (Вирус иммунодефицита человека)** – это вирус, который поражает клетки иммунной системы, в результате чего организм теряет способность защищаться от инфекций. ВИЧ-инфекция относится к долго текущим заболеванияниям. В результате, человек становится беззащитным не только перед обычными инфекциями, как грипп или дизентерия, но также перед бактериями и вирусами, которые ранее не могли вызвать заболевание, так как иммунная система не позволяла им размножаться в большом количестве.

← **СПИД (Синдром приобретённого иммунодефицита)** является конечной стадией ВИЧ-инфекции и развивается через несколько лет (от 3-х до 15-ти) после заражения ВИЧ. Пока болезнь не перешла в стадию СПИДа, человек может чувствовать себя хорошо, выглядет здоровым и даже не подозревать, что заражён.

Регулярно, проходить обследование на наличие ИППП (даже при отсутствии видимых симптомов).

⇒ При обнаружении симптомов ИППП у себя - немедленно обратиться к врачу (ИППП не проходят без специального лечения!)

⇒ Не заниматься самолечением. (без достоверной диагностики правильное лечение назначить невозможно. То, что помогло одному, может не помочь и даже навредить тебе).

Если кроме презерватива женщина не пользуется никакими другими противозачаточными средствами, (спираль, контрацептивные таблетки), то ей необходимо как можно скорее обратиться к гинекологу.

Существуют так называемые экстренные средства контрацепции – таблетки, с помощью которых в чрезвычайной ситуации можно предупредить беременность и после полового акта. Выбрать подходящее средство поможет врач! Обратиться к врачу необходимо как можно скорее, так как оральные контрацептивы используются первые 72 часа после полового акта.

Подводя итоги, еще раз напомним, что:

- ↳ ИППП можно предотвратить.
- ↳ Большинство ИППП излечимы.
- ↳ Современная медицина располагает эффективными средствами для лечения всех ИППП.

са – вагинального, орального или анального. Необходимо избегать любого контакта между половым членом, влагалищем, ртом и задним проходом до того, как будет надет презерватив. ➔ При каждом половом акте необходимо использовать новый презерватив.

➔ Категорически нельзя использовать два презерватива, надетых один на другой. Во время полового акта между ними возникает трение, от которого они могут порваться.

Таким же важным, как и правильное использование презервативов, является **применение смазывающих средств (лубрикантов)**, особенно при анальном половом контакте. Необходимо иметь в виду, что данный вид полового контакта, будучи наиболее травматичным и несая высокий риск появления трещин на стенках прямой кишки, является наиболее нежелательным и опасным с точки зрения вероятности заражения ИППП/ВИЧ.

Нельзя использовать смазывающие средства на масляной основе, так как они разрушают латекс, из которого сделаны презервативы.

Презерватив как эффективное средство защиты

Эффективное средство, защищающее от большинства инфекций*, передающихся половым путем – это презерватив.

При правильном использовании, презерватив способен защитить от 3-х проблем:

- ➔ большинство инфекций, передающихся половым путем;
- ➔ нежелательная беременность;
- ➔ ВИЧ-инфекция.

Правильное использование презерватива способно стает сохранению здоровья.

➔ Презерватив должен использоваться в течение всего полового акта, независимо от вида сек-

* Важно помнить, что определенные заболевания могут передаваться, несмотря на использование презерватива при сексуальном контакте, например чесотка, лобковые вши, герпес, в некоторых случаях – сифилис.

Как избежать заражения гепатитами В и С:

- ➔ Использовать презерватив при половых контактах.
- ➔ Использовать для инъекций только чистые одноразовые шприцы и иглы.
- ➔ Избегать контакта с чужой кровью.
- ➔ Не соглашаться на нанесение татуировки, если нет уверенности в стерильности инструментов.
- ➔ Не использовать чужую бритву, расческу, зубную щетку, мочалку, маникюрные ножницы.

Существуют серьезные причины для регулярного обследования:

- ➔ Некоторые ИППП не имеют выраженных симптомов, особенно у женщин. Болезнь может проявить себя уже на поздних стадиях, когда произошли необратимые изменения в организме.
- ➔ ИППП не проходят сами по себе без лечения.
- ➔ Вовремя выявленная и излеченная ИППП уменьшает риск развития осложнений.
- ➔ Наличие ИППП делает человека более восприимчивым к инфицированию ВИЧ.

У мужчин могут поражаться мошонка, область роста волос на груди. Волосистая часть головы не поражается. На волосах в пораженных участках можно заметить плотно сидящие коричневые или сероватые точечные образования, представляющие из себя яйца, отложенные лобковой вошью.

↩ Вирусные гепатиты В и С

Начало заболевания обычно острое – высокая температура, озноб, слабость. Многие больные отмечают сильную ломоту в суставах.

Пути передачи вирусных гепатитов В и С:

- ↪ Половой.
- ↪ Через кровь.
- ↪ От матери к ребенку – во время беременности и родов.

Заражение через кровь может произойти при: использовании бывших в употреблении шприцев, нестерилизованных медицинских инструментов, чужих бритв, зубных щеток, необработанных инструментов для татуировок, прямом контакте с чужой кровью.

Трихомоназ

Заражение происходит половым путем. Девочек младшего возраста могут заразить в быту при грубом нарушении правил гигиены. Признаки заболевания появляются в сроки от 4-х дней до 3-х недель после заражения, хотя довольно часто болезнь протекает без выраженных симптомов. Типичными признаками заболевания являются сильный зуд и раздражение в области промежности, а также обильные пенные выделения из влагалища с неприятным запахом. Без специфического лечения болезнь не проходит.

Локальные вши (педикулез)

Заражение происходит через телесный контакт и постельное белье. Признаки заболевания появляются через 1-3 недели после заражения и выражаются в сильном зуде и последующем раздражении в области головы, вокруг заднего прохода, реже в области подмышек.

Чесоточный клещ может также передаваться через одежду и постельные принадлежности. Менее распространенным является бытовая инфекция при недостаточном соблюдении гигиенических норм.

Типичным признаком заболевания является сильный зуд в области туловища и конечностей, усиливающийся к вечеру и в тепле.

При половом пути заражения типичным является поражение наружных половых органов полового члена и мошонки у мужчин и больших половых губ у женщин, а также нижней части живота и внутренней поверхности бедер. Кожа лица чесоточным клещом не поражается.

Типичными являются точечные кровянистые корочки, образующие, так называемые, чесоточные ходы, которые особенно отчетливо видны между пальцами рук, на локтях и запястьях. В случае присоединения дополнительной инфекции, а также при развитии аллергической реакции на чесоточного клеща болезнь может принимать тяжелый затяжной характер.

ления могут сопровождаться подъемом температуры, головной болью, недомоганием. Через пару дней в местах заражения появляются пузырьки, наполненные прозрачной жидкостью.

У женщин пузырьки могут появиться на половых губах, в промежности, вокруг заднего прохода, во влагалище, на шейке матки, на слизистой оболочке полости рта. Лимфатические узлы в области поражения увеличиваются.

Пузырьки быстро вскрываются, оставляя болезненные ранки, которые затем покрываются корочкой и постепенно заживают.

Полностью уничтожить вирус герпеса пока невозможно, он остается в организме, и болезнь периодически проявляется снова.

При наличии проявлений герпеса половые сношения не рекомендуются как из-за болевых ощущений, так и из-за опасности присоединения вторичной инфекции и усугубления болезни.

← Чесотка

Заражение происходит чаще всего при тесном телесном контакте, обычно при половых контактах.

КОНТАГИОЗНЫЙ МОЛЛЮСК

Заражение обычно происходит при тесном контакте кожных покровов, обычно при половом контакте.

При половом пути заражения высыпания обычно появляются на коже половых органов, нижней части живота, внутренней поверхности бедер и на

ягодицах.

Типичные высыпания обычно представляют мелкие беловатые или цвета кожи узелки с небольшим вдавлением в центре, при вскрытии которых выдавливается белая творожистая масса.

ГЕРПЕС

Заражение происходит во время полового контакта, в том числе орального. Передана инфекции может произойти от больной матери к плоду во время беременности, или новорожденный может получить инфекцию во время родов.

Проявления заболевания обычно начинаются через 2–10 дней после заражения. Первыми признаками герпеса являются жжение, боль и отечность в местах заражения. Эти яв-

канала, заднего прохода и на прилегающей к ним коже появляются небольшие светлорозовые или цвета кожи бородавчатые образования. Размер высыпаний колеблется от одного миллиметра до нескольких сантиметров. Высыпание быстро увеличивается в размерах и в количестве, постепенно приобретает вид цветной капусты, или остаются плоскими, малозаметными. Иногда присутствует зуд. Изменения могут иногда проявляться просто в уплотнении слизистой оболочки без появления бородавчатых разрастаний.

Часто кондиломы протекают бессимптомно и выявляются в ходе гинекологического обследования и выявления.

Мелкие кондиломы часто не видны невооруженным глазом и могут быть выявлены лишь в процессе длительного наблюдения.

Самостоятельное удаление кондилом недопустимо, ибо приводит лишь к их дальнейшему разрастанию.

Остроконечные кондиломы могут стать причиной злокачественных новообразований шейки матки, поэтому регулярное наблюдение при этом заболевании особенно важно.

органов и в области заднего прохода, так называемых широких кондилом.

Вышеперечисленные симптомы исчезают сами по себе через 2–6 недель, после чего сифилис входит в бессимптомный период. Период отсутствия симптомов чередуется с рецидивами – периодически повторяющимся проявлением признаков вторичного сифилиса.

При отсутствии лечения сифилис может перейти в третичную стадию и вызывать разрушительные явления в нервной системе, костях и внутренних органах.

Остроконечные кондиломы

Заражение происходит при вагинальном и анальном половом контакте, реже при оральном. Передача инфекции способствует наличию повреждений на слизистой оболочке или уже имеющихся других инфекций в области половых органов.

Инкубационный период длится от нескольких недель до девяти месяцев, чаще – 3 месяца.

В области половых губ, влагалища, промежности, шейки матки, отверстия мочеиспускательного

Возбудитель сифилиса – бледная спирохета может внедриться в слизистую оболочку или поврежденную кожу любой части тела: половые органы, слизистая оболочка полости рта, язык, пальцы, задний проход и т.д.

Там, где спирохета проникла в организм, через 3–4 недели появляются первичные проявления болезни в виде так называемого твердого шанкра – небольшой круглой безболезненной язвы с плотным основанием. Лимфатические узлы вблизи язвы увеличиваются (обычно в паховой или подчелюстной области), часто с одной стороны. Шанкр заживает сам по себе через 3–4 недели. С момента появления первичных высыпаний человек становится заразным.

Вторичная стадия заболевания начинается через 2–4 месяца после заражения, когда появляются симметричные высыпания (сыпь) на теле, ладонях, подошвах и слизистых оболочках. Появление высыпаний может сопровождаться подъемом температуры, головной болью, недомоганием, увеличением лимфатических узлов и специфической ангиной. Может наблюдаться выпадение волос и появление плотных, телесного цвета разрастаний на слизистой оболочке половых

чительное кровотечение после полового акта или в период между менструациями. В случае воспаления прямой кишки отмечается незначительное выделение крови и слизи.

При распространении воспалительного процесса на фаллопиевы трубы могут образовываться спайки и, как следствие, бесплодие или повышенный риск внематочной беременности.

Появляющиеся в результате воспалительного процесса спайки вызывают боли в нижней части живота. Нередким осложнением являются поражения суставов и глаз.

Недолеченный во время беременности хламидиоз может передаваться ребенку и вызывать пневмонию (воспаление легких) и воспаление глаз.

Сифилис

Заражение может произойти при незащищенном вагинальном, оральном или анальном половом контакте, а также от матери ребенку во время беременности. Болезнь развивается медленно, и первичные симптомы, особенно у женщин, часто остаются незамеченными.

В случае если заражение произошло при оральном сексе, может наблюдаться боль в горле, как при ангине, или же симптомы могут отсутствовать. В течение одной-двух недель проявления исчезают даже без лечения, что означает переход болезни в хроническую стадию. Симптомы появляются вновь при обострениях.

Неизлеченная гонорея может вызывать воспаление и спайки в фаллопиевых трубах, приводя к бесплодию и повышая риск внематочной беременности.

Хламидиоз

Заражение хламидиозом происходит при незащищенном половом контакте. Заражение может также произойти от больной матери к ребенку при родах.

Заболевание, особенно у женщин, часто протекает бессимптомно.

Проявлением заболевания могут быть необычные выделения из влагалища: скудные, прозрачные, напоминающие клей. Могут наблюдаться зуд и жжение при мочеиспускании, боли в нижней части живота и в области крестца, а также незначительная

Гонорея

Заражение гонореей может произойти при незащищённом половом контакте через влагалище, задний проход или рот. Через рывки инфекции может распространиться и на глаза.

Признаки заболевания, ярко выраженные у мужчин и женщин могут проявляться слабо или даже полностью отсутствовать.

Проявления начинаются через 2-7 дней с момента заражения и выражаются в выделении из влагалища, которые могут казаться обильными или более обильными.

Может появиться ощущение жжения при мочеиспускании. Боли внизу живота и повышение температуры могут быть признаком распространения воспаления на яичники.

У мужчин гонорея проявляется жжением при мочеиспускании и частыми позывами к мочеиспусканию, гнойными желтовато-зелеными выделениями из мочеиспускательного канала и его отеком, болезненной эрекцией.

Базовая информация о заболеваниях

У ЖЕНЩИН:

- необычные выделения или запах из влагалища;
- боли внизу живота – область между пупком и половыми органами;
- жжение и зуд вокруг влагалища;
- кровянистые выделения из влагалища в период между менструациями;
- боль в глубине влагалища при половом акте.

У МУЖЧИН:

- выделения из мочеиспускательного канала;
- высыпания на половых органах.

Некоторые ИППП не имеют выраженных симптомов. Если есть подозрение, что у тебя или у твоего партнера ИППП, надо как можно быстрее пройти обследование.

Как предотвратить ИППП?

Существует ряд способов защитить себя от ИППП. Например:

- ➔ Воздержание от сексуальных контактов.
- ➔ Супружеская верность.
- ➔ Использование презервативов при каждом сексуальном контакте.

В зависимости от конкретной ситуации можно выбрать подходящий способ предохранения от ИППП.

Как распознать ИППП?

- СИМПТОМЫ, ОБЩИЕ ДЛЯ МУЖЧИН И ЖЕНЩИН:
- ➔ язвы, высыпания, пузырьки, узелки в области половых органов;
 - ➔ жжение и боль при мочеиспускании;
 - ➔ отечность в области половых органов;
 - ➔ жжение, боль, необычные выделения из прямой кишки;
 - ➔ отечность или краснота в горле.

В чем опасность ИППП?

Без правильного лечения все ИППП протекают долго, волнообразно и нередко приводят к осложнениям. Например, неизлеченные гонорейи или хламидиоз являются одними из главных причин бесплодия, как мужского, так и женского. Кроме того, наличие инфекции, передающихся половым путем, повышает риск заражения ВИЧ-инфекцией – самым опасным заболеванием из группы ИППП. Это связано с тем, что инфекции вызывают воспаление и повреждение целостности слизистых оболочек и кожи, которые в таком состоянии более подвержены проникновению ВИЧ-инфекции. При некоторых заболеваниях (ВИЧ-инфекция, гепатиты В, С, сифилис) без адекватного лечения возможен смертельный исход.

Важно понимать:

- ➔ ИППП можно предотвратить.
- ➔ Большинство ИППП излечимы.
- ➔ Современная медицина располагает эффективными средствами для лечения всех ИППП.

При половых контактах существует опасность заражения инфекциями, которые передаются половым путем (ИППП). Поэтому следует избегать интимной близости, которая может помочь снизить риск заражения ИППП.

Инфекции, передающиеся половым путем (ИППП)

Что такое ИППП?

Инфекции, передающиеся половым путем (ИППП) – это заболевания, которые передаются от одного человека к другому при половых контактах. Некоторые из них вызываются паразитами, другие бактериями и вирусами. Наиболее опасные инфекции – те, что вызываются вирусами. Это такие заболевания, как герпес, гепатиты В и С, ВИЧ-инфекция. Проникнув в организм на всю жизнь, оказывая на него определенное воздействие.

Инфекции, передающиеся половым путем (ИППП) ... 4

4	Что такое ИППП?
4	В чем опасность ИППП?
5	Как предотвратить ИППП?
6	Как распознать ИППП?
7	

Базовая информация о заболеваниях ... 8

8	Гонорея
8	Хламидиоз
9	Сифилис
10	Остроконечные кондиломы
12	Контагиозный моллюск
14	Герпес
14	Чесотка
15	Трихомоноз
17	Лобковые вши
17	Вирусные гепатиты В и С
18	

Презерватив как эффективное средство ... 20**защиты****Что такое ВИЧ и СПИД? ... 24**

24	Как происходит заражение?
25	Как предотвратить заражение?
26	Может ли человек почувствовать, что заразился ВИЧ?
27	Что такое тест на ВИЧ?
27	Как обследоваться на ВИЧ?

© РОО «СПИД информсвязь», 2013 г.
При перепечатке ссылка на «СПИД информсвязь» обязательна.

Распространяется бесплатно



Брошюра издана РОО «СПИД информсвязь» в рамках
Программы оказания содействия странам Восточной Европы
и Центральной Азии в борьбе с инфекционными заболеваниями.

RUSSIA



БЕРЕТ СЕРЯ